ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

22.12.2020թ. թվականին կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/2-2 գնման պայմանագրի

ք. Երևան «13» 01 2021թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ՝ Գ. Ավետիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Բեգլարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 22.12.2020թ. կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/2-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.14 կետերը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ապրանքի ձեռքբերման համար հատկացված 299000 (երկու հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Հաստատել Պայմանագրի գնման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:
2. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի Հավելված 2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100
ՀՎՀՀ 00000911

Տնօրենի ժ/պ ____________ Գ. Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՖԼԵՇ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևամ. Կողբացu 30
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789

Գլխավոր տնօրեն ____________ Ս. Բեգլարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 1․
«22» դեկտեմբերի 2020թ. կնքված
N ԵՄ-ԳՀԱՊՁԲ 21/2-2 ծածկագրով պայմանագրի
«13» «01» 2021թ. կնքված
թիվ 2 համաձայնագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ապրանքի | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | Չափման միավորը | Միավոր գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր քանակը | Գումար (ՀՀ դրամ) | Հասցեն | Ենթակա քանակը | Ժամկետը |
| 2 | 09132200 | Բենզին ռեգուլյար | Աի-92-Կ5 «ՌՈՄՆԵՖՏ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ | Օկտանային թիվը որոշված՝ հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91:<br>Շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81:<br>Կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի:<br>Խտությունը՝ 15 0C ջերմաստիճանում՝ 720-775 կգ/մ3:<br>Ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի:<br>Ածխաջրածինների ծավալային մասը, ոչ ավելի՝ արոմատիկ - 21%, օլեֆիններ - 21%, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի:<br>Թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի:<br>Օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ - 3 %, էթանոլ- 5 %, իզոպրոպիլ սպիրտ- 10 %, իզոբութիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C5 և ավելի) - 15 %, այլ օքսիդիչներ - 10 %:<br>Մատակարարումը կտրոնային (կիրառելի է միայն լիտրով ձեռք բերելու դեպքում):<br>Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»:<br>**Մատակարարումը՝ կտրոնային եղանակով, որոնք պետք է սպասարկվեն Երևանի բոլոր վարչական շրջաններում:** | լիտր | 299 | 4500 | 1345500 | ՀՀ, ք.Երևան | 500 | 29.12.2020թ. կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| | | | | | | | | | | 1000 | Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| | | | | | | | | | | 3000 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և այունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 09134200 | Դիզ. Վառելիք ամառային | ԴՏ-Լ-Կ5 «ՌՈՄՆԵՖՏ» ԲԱԺՆԵՏԻՐ ԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ | Ցետանային թիվը 51-ից ոչ պակաս: Ցետանային ցուցիչը 46-ից ոչ պակաս: Խտությունը 150C ջերմաստիճանում 820-845 կգ/մ3: Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինների զանգվածային մասը՝ 11%-ից ոչ ավելի: Ծծմբի պարունակությունը 10 մգ/կգ-ից ոչ ավելի: Բռնկման ջերմաստիճանը՝ 55 0C-ից ոչ ցածր: Ածխածնի մնացորդը /կոքսելիությունը/ 10 % նստվածքում 0,3 %-ից ոչ ավելի: Մածուցիկությունը 400C-ում 2,0-ից մինչև 4,5 մմ2/վ: Պղտորման ջերմաստիճանը՝ 5 0C-ից ոչ բարձր: Մատակարարումը կտրոնային (կիրառելի է միայն լիտրով ձեռք բերելու դեպքում): Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»: **Մատակարարումը՝ կտրոնային եղանակով, որոնք պետք է սպասարկվեն Երևանի բոլոր վարչական շրջաններում:** | լիտր | 289 | 1500 | 433500 | ՀՀ, ք.Երևան | 500 | 29.12.2020թ. կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| | | | | | | | | | | 1000 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սույնով ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

**ԳՆՈՐԴ**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100
ՀՎՀՀ 00000911

Տնօրենի ժ/պ-------------------Գ. Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՖԼԵՇ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևամ. Կողբացի 30
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789

Գլխավոր տնօրեն-------------------Ս. Բեգլարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
«22» դեկտեմբերի 2020թ. կնքված
N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/2-2 ծածկագրով պայմանագրի
«13» 01 2021թ. կնքված
թիվ 2 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Չ/Մ | քանակ | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ըստ ամիսների. այդ թվում՝ | | | | |
| | | | | | 2020թ-ին | 2021թ-ին | | | |
| | | | | | դեկտեմբեր | հունվար | փետրվար | մարտ | Ընդամենը |
| 2 | 09132200 | Բենզին ռեգուլյար | լիտր | 1500 | 149500 | 448500 | 448500 | 448500 | 448500 |
| 4 | 09134200 | Դիզ. Վառելիք ամառային | լիտր | 500 | 144500 | 144500 | 144500 | 144500 | 144500 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100
ՀՎՀՀ 00000911

Տնօրենի ժ/պ ____________ Գ. Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՖԼԵՇ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևամ. Կողբացւ 30
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789

Գլխավոր տնօրեն ____________ Ս. Բեգլարյան
/ստորագրություն/
Կ.Տ